Անկախ աուդիտորական եզրակացություն

«Աուդիտ Սթար» ՍՊԸ
Բուսաբանական փ. 14, Երևան, Հայաստան
Հեռ: +37410297229, 091423313, 091202304
ֆաքս +37410200918
www. auditstar.am
auditstar@mail.com
Աուդիտորական գործունեության լիցենզիա 015 տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 27.12.2002 թ.

"Նորավանք" գիտակրթական հիմնադրամի հոգեբարձուների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել **Նորավանք" գիտակրթական հիմնադրամի** (այսուհետ՝ "Հիմնադրամ") ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2011թ., նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ պարզաբանող ծանոթագրությունները:

Հիմնադրամի ղեկավարության պատասխանատվությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է Հիմնադրամի ղեկավարությունը:

Այս պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար տեղին ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդնում և կիրառում: Այս պատասխանատվությունը ենթադրում է նաև համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառություն, ինչպես նաև ողջամիտ հաշվապահական գնահատականների օգտագործում:

Աուդիտորների պատասխանատվությունը

Մենք իրականացրել ենք աուդիտը ՀՀ աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում, որ

Ք.Երևան, Բուսաբանական 14, հեռ. 091423313, 091202304 կայք՝ www.auditstar.am, էլ. փոստ՝ auditstar@mail.com

ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից: Աուդիտորական աշխատանքները ներառում են թեստային ընթացակարգերի իրականացման միջոցով ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության և բացահայտումների ուսումնասիրում:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախության կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել Հիմնադրամի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից
կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ կատարված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մենք չենք կառավարել Հիմնադրամի 2011թ. գույքագրման պրոցեսը և չենք մասնակցել դրան:

Կարծիք՝

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2011թ., ինչպես նաև նրա ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառումը կարգավորող իրավական ակտերի :

Տնօրեն-Բաժնետեր
Արմեն Մելքոնյան

Աուդիտոր -Բաժնետեր
Ղ. Մուշեղյան

24.02. 2012թ.

Ք.Երևան, Բուսաբանական 14, հեռ. 091423313, 091202304 կայք՝ www.auditstar.am, էլ. փոստ՝ auditstar@mail.com